	«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԸ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ համագործակցային կարողությունների

ձևավորումը առարկայի դասավանդման գործընթացում

Առարկան՝ Մաթեմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Շողեր Նալբանդյան

Ուսումնական հաստատություն՝ Օձունի թիվ 1 միջնակարգ դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

1.Նախաբան։Հետազոտության նպատակները,խնդիրները,արդիականությունը...2-4

2.Աշխատանքի բովանդակությունը.....5-15

3.Եզրակացություն.....16-18

4.Օգտագործված գրականության ցանկ.....19

Բովանդակություն

1.Ներածություն: Հետազոտության նպատակները,խնդիրները,արդիականությունը։

2.Սովորողների մեջ համագործակցային կարողությունների ձևավորման ընդհանուր բնութագիրը։

3.Համագործակցային ուսուցման կազմակերպման համակարգում կիրառվող ուսուցման մեթոդները։

4.Եզրակացություն։

5.Օգտագործված գրականության ցանկ։

1.Ներածություն: Հետազոտության նպատակները,խնդիրները,արդիականությունը:

Աշխատանքի նպատակն է՝ ներկայացնել,թե ի՞նչ է նշանակում «համագործակցային կարողություն»,և որոնք են սովորողների մեջ համագործակցային կարողությունների ձևավորման ուղիները:Այս գործընթացում մեր առջև դրված խնդիրներն են՝

1.Ներկայացնել համագործակցային կարողությունների ձևավորման ու զարգացման ուղիները.

2.Առանձնացնել և ներկայացնել դպրոցականների համագործակցային ուսուցման կազմակերպման համակարգում կիրառվող ուսուցման մեթոդները:

Դպրոցում երեխան ձեռք է բերում ոչ միայն նոր գիտելիքներ, կարողություններ, այլև որոշակի սոցիալական կարգավիճակ: Փոխվում են հետաքրքրությունները, արժեքները, երեխայի կյանքի ամբողջ դրվածքը: Դպրոցական տարիքում ուսումնական գործունեությունը դառնում է առաջնային: Այս տարիքի երեխայի անձի առանձնահատկությունները լրացուցիչ դժվարություններ են առաջացնում ուսման գործընթացում: Դրա համար էլ դասերի ժամանակ երեխաների մեծամասնության մոտ ուսման դրդապատճառները դրսևորվում և պահպանվում են ուսուցչի ջանքերի շնորհիվ: Բարձր ինքնագնահատականը շատ երեխաների մոտ հանգեցնում է նրան, որ նրանք դժվարանում են հասկանալ մանկավարժական գնահատման չափանիշները: Իրենց ուսումնական գործունեության գնահատականը նրանք համարում են ամբողջ անձի գնահատական: Բացասական գնահատականները, դիտողությունները նրանց մոտ առաջացնում են տագնապայնություն, անհարմարության վիճակ, ինչի հետևանքով աշակերտներից շատերը դառնում են պասիվ: Երեխայի հուզական վիճակից կախված վարքի անկայունությունը դժվարացնում է ինչպես մանկավարժի հետ հարաբերությունները, այնպես էլ դասի ժամանակ երեխաների կոլեկտիվ աշխատանքը:Այս դեպքում կրկին պիտի խոսել ուսուցչի հմտության,ճիշտ կողմնորոշվելու,ճիշտ մեթոդներ ընտրելու կարողության մասին:Սովորողներին

ուսումնական գործունեության մեջ ընդգրկելու համար կան բազմաթիվ դրդապատճառներ՝ մոտիվացիա,ուսումնական խնդիր,հսկողություն և այլն։Դ. Էլկոնինը դրանք անվանել է ուսումնա-ճանաչողական դրդապատճառներ։

Նոր սոցիալական դիրքի նկատմամբ երեխայի ձգտումը նախադրյալ է և հիմք դպրոցական տարիքում հոգեբանական շատ առանձնահատկությունների կայացման համար։Ձևավորվում է պատասխանատվությունը դպրոցական պարտականությունների կատարման համար,երեխան սկսում է կատարել ուսումնական աշխատանք:

Ուսուցման դաս-դասարանային համակարգը ենթադրում է ոչ միայն ուսուցչի , այլև այլ երեխաների հետ հատուկ հարաբերություններ։Այստեղից հետևում է,որ ուսումնական գործունեությունն իր բնույթով կոլեկտիվ գործունեություն է։ Երեխաների համար հատկանշական է համագործակցային-մրցակցային շփումը հասակակիցների հետ:Այստեղ շատ կարևոր է երեխայի կամային ոլորտի զարգացման առանձնահատկությունների բացահայտումը։ Երեխայի վարքի կամային բնույթը դրսևորվում է ուսուցչի առաջադրած պահանջների, կանոնների կատարման ժամանակ։ Ուսուցման համակարգին զուգահեռ կարևոր է նաև ուսումնական գործընթացի կազմակերպման ձևը։ Այս դեպքում արդյունավետ է երեխաների համագործակցությունը։ Ուսուցիչը, կազմակերպելով աշակերտների համատեղ աշխատանք, դրանով իսկ կազմակերպում է նրանց գործնական շփումը: Խմբային աշխատանքի ժամանակ բարձրանում է երեխաների ինտելեկտուալ ակտիվությունը, ավելի լավ է յուրացվում ուսումնական նյութը։ Զարգանում է ինքնակարգավորումը, քանի որ երեխաները, վերահսկելով համատեղ աշխատանքի ընթացքը, սկսում են ավելի լավ գնահատել իրենց հնարավորությունները և գիտելիքների մակարդակը։[1]Աշակերտների համագործակցությունն անհնարին է առանց իրենց տեսակերտների համակարգման, խմբի ներսում գործողությունների բաշխման, ինչի

1.Տե՛ս՝Обухова Л. Ф., Детская (возрастная) психология. Учебник. -- М., Российское педагогическое агентство. 1996, 374 с.

շնորհիվ երեխաների մոտ ձևավորվում են համապատասխան ինտելեկտուալ կառույցներ:

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու դասի էությունն ու պլանավորել այն, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման և արժևորման համար: «Խմբային աշխատանքի ամենագնահատելի հատկանիշը խմբի անդամների միջև համագործակցությունն է: Համագործակցության արդյունավետությունը կախված է մեթոդապես ճիշտ տարվող գործունեությունից: Ուսուցիչը պետք է հաշվի նստի աշակերտների ինքնուրույն կարծիքների, կայացրած որոշումների, միմյանց հետ ազատորեն հաղորդակցվելու իրավունքների հետ»[2]:

Սովորողների մեջ համագործակցային կարողությունների ձևավորման համար անհրաժեշտ է տիրապետել նրանց տարիքային առանձնահատկություններին,իմանալ և կարողանալ գործածել համագործակցային ուսուցման կազմակերպման համակարգում կիրառվող ուսուցման մեթոդները:

Այսպիսով,կարելի է ասել,որ աշխատանքը նպատակ է հետապնդում ներկայացնել դպրոցականների տարիքային առանձնահատկությունները,և,ելնելով դրանից,ներկայացնել սովորողների մեջ համագործակցային կարողությունների ձևավորման ուղիները:Պետք է նաև նպաստել սովորողների ակտիվության բարձրացմանը , միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, ուսուցման գործընթացն ակտիվ ու հետաքրքիր դարձնելուն, համագործակցային խմբերով աշխատելուն, կրթության որակի բարձրացմանը:

2.Տե՛ս Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա., Արնաուդյան Ա., Գրիգորյան Ք.,Դավթյան Մ., Օհանովա Ի., Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Երևան, 2004,էջ 178:

2.Սովորողների մեջ համագործակցային կարողությունների ձևավորման ընդհանուր բնութագիրը։

Ի՞նչ ենք հասկանում <<համագործակցային կարողություն և ուսուցում>> ասելով։Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է։ Այն ենթանդրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը:Համագործակցային կարողությունների ձևավորման արդյունքում սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն:Համագործակցային ուսուցման ժամանակ խմբի անդամները համգործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար։

Համագործակցային ուսուցման, ուսումնառության արմատները հասնում են Ջոն Դյուիի աշխատություններին:Ըստ Ջոն Դյուիի,կրթությունն ուսուցման այնպիսի մեխանիզմ է, որը քաղաքացիներին սոցիալ-ժողովրդական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս։

Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է։ Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը։ Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդներն ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում, և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքներն ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցում։

Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար[3]:Համագործակցային կարողությունների ձևավորման համար կարևոր է դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը, բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը, ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը:

Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով: Այստեղ կարևորվում է ոչ միայն գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը: Համագործակցության ժամանակ ստեղծվում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ:Այս ամենը նպաստում են,որպեսզի հետադարձ կապը ճշմարիտ լինի:

Երեխաներն իրենց էությամբ հետազոտողներ են, ուրախությամբ և զարմանքով բացահայտում են իրենց շրջապատող աշխարհը: Նրանց ամեն ինչ հետաքրքրում է: Համագործակցային կարողությունների բացահայտման ու զարգացման միջոցով սովորողներին հնարավորություն է տրվում զարգացնել փորձերի նկատմամբ հետաքրքրություն, դիմացինի կարծիքը հաշվի առնելու կարողություն,միասնական վերջնարդյունքի հասնելու ցանկություն:Համագործակցային ուսուցումը հնարավորություն է տալիս կատարել դիտարկումներ,արդյունավետ

3. Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006,էջ 96:

համագործակցել,հաղորդակցվել,լսել և հարգել ուրիշների կարծիքը։

Համագործակցային ուսուցման կազմակերպումը հնարավորություն է տալիս աշակերտներին սովորել իրենց էությանը համապատասխան ձևով,ներդնել իրենց առավելությունները ընդհանուր նպատակի իրագործման համար։Բոլոր աշակերտների համար ստեղծվում է բարենպաստ միջավայր,որտեղ նրանք կարողանում են ցույց տալ իրենց ուժեղ կողմերը։

Համագործակցային ուսուցման մեջ շատ կարևոր է ուսուցչի դերը։Հաջողության հասնելու համար ուսուցիչներին հարկավոր են երեխաներին կառավարելու և օգնելու նոր եղանակներ,երեխաների արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ մոտեցումների խոր ընկալում: Ուսուցիչն այն կարող է ուղղորդել սովորողին, ստեղծել ուսուցման համար նպաստավոր միջավայր, աջակցել և մտածելու հնարավորություն ընձեռել: Համագործակցային մեթոդներն ակնկալում են ուսուցչի դերի փոփոխություն, և այդ դերը լի է մարտահրավերներով: Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար՝ խմբի անդամներին ուղղորդելու համար: Խմբերին անհրաժեշտ է բավական ժամանակ՝ միմյանց հետ ազատ և հարմարավետ զգալու համար: Ինչպես ավանդական, այնպես էլ համագործակցային ուսուցման դեպքում հաջողության առանցքը ուսուցչի ճիշտ նախապատրաստվելն է: Ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակության մատուցումը, այլ նաև աշակերտների գործողությունները և գնահատումը:

Այսպիսով,վերը նշվածից ելնելով՝ կարելի է եզրակացնել,որ համագործակցային ուսուցման համակարգը թույլ է տալիս երեխաներին,լինելով դասավանդման մեջ ինտեգրվածներ,ձեռք բերել վստահություն և բարձրացնել իրենց ինքնագնահատականը։Սա օգնում է աշակերտներին՝ ավելի քիչ կախված լինել ուսուցչից։Խմբի յուրաքանչյուր անդամ հնարավորություն ունի անհատապես իրականացնել իր աշխատանքը խմբի կարիքների շրջանակներում։Միևնույն ժամանակ այդ խնդիրները պետք է լինեն հավասար հիմքերի վրա և բոլորի համար ունենան նույն նշանակությունը։

Ի՞նչ ենք հասկանում <<դաս-դասարանային>> համակարգ ասելով,որո՞նք են նրա առանձնահատկությունները:Համագործակցային ուսուցման և դաս-դասարանային համակարգի տարբերությունները որո՞նք են:

Դաս-դասարանային համակարգի մասին առաջին անգամ խոսել է Կոմեսնկին:Այն ներկայում էլ համարվում է ուսուցման կազմակերպման հիմնական ձևը:Նա սահմանել է ուսումնական տարվա գաղափարը, մտցրել դպրոցական արձակուրդները, հստակեցրել ուսումնական օրվա կազմակերպումը: Դպրոցներում այն ժամանակ աշակերտների ընդունելությունը կատարվում էր ամբողջ տարվա ընթացքում: Աշակերտները, թեև նստում էին միևնույն դասարանում, բայց դասարանի բոլոր աշակերտների հետ կոլեկտիվ պարապմունքներ չէին տարվում. յուրաքանչյուր աշակերտ սովորում էր իր անհատական տեմպով: Ուսուցիչը յուրաքանչյուրի հետ պարապում էր անհատապես: Կոմենսկին պնդում էր, որ ընդունելությունը դպրոցում կատարվի տարվա մեջ մեկ անգամ, որ ուսուցիչը կոլեկտիվ աշխատանք կատարի ամբողջ դասարանի հետ:

Դաս-դասարանային համակարգի բնորոշ առանձնահատկություններն են.

- ուսուցումը կազմակերպվում է նույն տարիքի, նույն պատրաստվածության մակարդակն ունեցող սովորողների խմբի հետ,
- ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է,
- յուրաքանչյուր դաս նվիրված է մեկ ուսումնական առարկայի,
- ուսուցումն իրականացվում է կայուն դասացուցակով,
- ուսուցման մեջ ղեկավարող դերը պատկանում է ուսուցչին[4]:

Բայց,ինչքան էլ կրթության ավանդական ձևերն արդի լինեն,նրանց փոխարինելու կամ լրացնելու են գալիս նոր ձևեր: Կրթության ոլորտի աշխատողները գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացած ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն

4.Տե՛ս՝ Коменский Я.А., Великая дидактика. Всеобщего совета об исправлении дел человеческих. Пампедия//Педагогическое наследие/Сост. В. М. Кларин, А.Н. Джуринский.-М.,-1989.

գիտելիքների տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Հետևաբար, ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուրեք, դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումները:Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է:

Համագործակցային ուսուցման տեսության զարգացման և գործնական կիրառությունների մասին հարցերում հաջողություններ են գրանցել առաջադեմ կրթական համակարգեր ունեցող բազմաթիվ երկրներ՝ ԱՄՆ, Ռուսաստան, Բրիտանիա և այլն:Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Համագործակցային ուսուցումը մեթոդ չէ. այն ուսուցման եղանակ է, ինչպես դաս-դասարանային համակարգը, կոլեկտիվ ուսուցման համակարգը և այլն: Սա ուսուցման այն եղանակն է, որը կոչված է վերացնելու բոլորին միաժամանակ սովորեցնելու առումով ավանդական ուսուցման հիմնական թերությունը: Կարճ ասած՝ շատ դժվար է և մեծ մասամբ անհնարին, որ ուսուցիչը կարողանա 30-35 հոգանոց դասարանին միաժամանակ ընդգրկել ակտիվ ուսուցման գործընթացում:Ի տարբերություն դաս-դասարանային համակարգի, համագործակցային ուսուցման ընթացքում շատ կարևոր է խմբերի մեծությունը:Առավել արդյունավետ են համարվում 4-5 հոգուց բաղկացած խմբերը:Այդպիսի խմբերում աշակերտները առավել մեծ ակտիվություն դրսևորելու հնարավորություն ունեն:Դաս-դասարանային ուսուցման դեպքում ակնհայտ է , որ հնարավոր չէ արդյունավետ սովորել միայն դիտողի, լսողի, պասիվ վիճակում գտնվելով:Աշակերտն ավելի լավ է սովորում, երբ ակտիվ մասնակցում է գործընթացին:Դաս-դասարանային ուսուցման ժամանակ, երբ ուսուցիչն աշխատում է դասարանի (մեծ) խմբի հետ, ապա աշակերտները արտահայտվելու, քննարկելու ավելի քիչ հնարավորություններ են ունենում:Փոքր խմբի պարագայում այդ հնարավորությունները շատ ավելի մեծ են:

Դաս-դասարանային համակարգի ուսուցման գործընթացի կառուցվածքային հիմքում դրված է փոխազդեցության ուսուցիչ-աշակերտական խումբ ձևը: Սա է

պատճառը, որ ուսումնական պարապմունքները կազմակերպվում են ընդհանուր ճակատով, այսինքն՝ աշխատանքի յուրաքանչյուր պահին բոլոր աշակերտները զբաղված են միևնույն խնդրով, աշխատում են միևնույն ձևով, տվյալ խնդրի համար։Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր։Այս ամենը վկայում են ուսուցման համագործակցային եղանակի արդյունավետության և արդիականության մասին։Սրանից հետևում է,որ ուսուցման համար բոլորին հատկացվում է միևնույն ժամաքանակը։Ուսումնական խմբի անդամների մեծ մասը պասիվ լսողի դերում է հայտնվում: Սրա հաղթահարման ուղիներից մեկն աշակերտների միջև արդյունավետ փոխազդեցության կազմակերպումն է, ինչն էլ հենց հանդիսանում է համագործակցային ուսուցման հիմնական գաղափարը: Համագործակցային ուսուցման կառուցվածքային հիմքը յուրաքանչյուրը յուրաքանչյուրի հետ փոխազդեցության ձևն է, ինչը հնարավորություն է տալիս ստեղծել համընդհանուր համագործակցության ու փոխօգնության վրա հիմնված ուսուցման գործընթաց: [5]Ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամ իր ուսումնական նպատակներն ու խնդիրներն իրագործում է մյուսների օգնությամբ՝ միաժամանակ օգնելով մյուսներին իրագործել իրենց խնդիրներն ու նպատակները:

Վերը նշվածիվ ելնելով՝ կարելի է եզրակացնել,որ ուսուցման կազմակերպման խմբային եղանակը, իր դաս-դասարանային և դասախոսություն-սեմինարային տարատեսակներով հանդերձ, սպառել է իրեն, և վաղուց արդեն առաջ է եկել կրթության կազմակերպման համագործակցային եղանակին անցնելու անհրաժեշտությունը։Խմբային եղանակից անցումը համագործակցայինի կատարվում է փուլերով, ինչը նշանակում է, որ համագործակցային ուսուցման կառուցումն իրականացված փուլերի ամրապնդման ու տարածման և հաջորդ փուլի ստեղծման ու յուրացման անընդհատ գործընթաց է: Այսինքն՝ առաջ են գալիս նորը յուրացնելու և արդեն յուրացրածը տարածելու նպատակով մանկավարժական կադրերի անընդհատ վերապատրաստման խնդիրներ:

5.Տե՛ս Վ. Դյաչենկո, Ժամանակակից դիդակտիկայի հիմնահարցերը ,էջ 5։

Այսպիսով՝ համագործակցային ուսուցման արդյունքում խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջացելու մթնոլորտ, խմբի անդամները համգործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը:Խմբի յուրաքանչյուր անդամ կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար:

3.Համագործակցային ուսուցման կազմակերպման համակարգում կիրառվող ուսուցման մեթոդները:

Որո՞նք են այն մեթոդները,որոնք կարելի է կիրառել համագործակցային ուսուցման ժամանակ:

Ինչպես նշվեց,համագործակցային ուսուցումը փոխում է աշակերտի և ուսուցչի դերը դասարանում: Դասավանդման և ուսուցման ղեկավարումը բաժանվում է աշակերտների խմբերի կողմից և նրանց միջև: Աշակերտները ավելի շատ հնարավորություն են ստանում սովորելու, հարցնելու, միմյանց հետ կիսվելու, ինչպես նաև քննարկելու իրենց գաղափարները:Համագործակցային ուսցման բազմաթիվ մեթոդներ գոյություն ունեն:Դրանք են՝ աշակերտների թիմային առաջադիմություն, խճանկար, շրջագայություն պատկերասրահում, երեք բանալի և մեկ կողպեք, հինգրոպեանոց ազատ շարադրանք:

Ըստ Պասի Սահլբերգի՝ <<Խմբային աշխատանքի ամենագնահատելի հատկանիշը խմբի անդամների միջև համագործակցությունն է: Համագործակցության արդյունավետությունը կախված է մեթոդապես ճիշտ տարվող գործունեությունից: Ուսուցիչը պետք է հաշվի նստի աշակերտների ինքնուրույն կարծիքների, կայացրած որոշումների, միմյանց հետ ազատորեն հաղորդակցվելու իրավունքների հետ>>:[6]

Համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ. դրանք պետք է ուղղված լինեն սովորողների մտավոր ու զգայական կարողությունների,

6.Տե՛ս Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա., Արնաուդյան Ա., Գրիգորյան Ք.,Դավթյան Մ., Օհանովա Ի., Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Երևան, 2004:

ինքնուրույնության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը:

Մեթոդի ընտրության վրա կարող են ազդել բազմաթիվ գործոններ։Դրանք են՝

1.ուսուցման նպատակները և խնդիրները,

2. նյութի բովանդակությունը,

3. ուսումնական նյութի ծավալը և բարդությունը,

4. նոր գիտելիք ձեռք բերելու նկատմամբ աշակերտների շահագրգռվածությունը և համագործակցային հմտությունների մակարդակը,

5. աշակերտների տարիքային առանձնահատկությունները,

6.ուսումնական ժամաքանակը,

7. ուսուցման նյութատեխնիկական պայմանները,

8. ուսուցիչ –աշակերտ փոխհարաբերությունները,

9.աշակերտների թվաքանակը դասարանում,

10.ուսուցչի պատրաստվածության մակարդակը և այլն:

Համագործակցային ուսուցմանը նպաստող գործոններից են՝

-դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը,

-բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը,

- ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը:

Հերթով անդրադառնանաք համագործակցային ուսուցման մեթոդներին։

«Աշակերտների թիմային առաջադիմության» մեթոդը խթանում է աշակերտների

ուսումնառությունը: Այստեղ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդը հնարավորություն է տալիս գնահատելու և՛ առանձին աշակերտներին, և՛ խմբերին: Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից:

«Խճանկար» մեթոդի ժամանակ մաթեմատիկայի դասաժամին աշակերտներին կարելի է բաժանել չորս կամ հինգ անդամ ունեցող տարասեռ խմբերի: Յուրաքանչյուր խմբին տրվում է մեկ առաջադրանք նույն թեմայի շուրջ և աշխատելու համար որոշակի ժամանակ: Այն լրանալուց հետո խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքը,կատարում բացատրական աշխատանքներ:

Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր աշխատանքը, բայց արդյունքում սովորում են ամբողջ դասը՝ դադարեցնելով աշխատանքը և ուշադիր լսելով բոլոր խմբերի պատասխանները:

<<Շրջագայություն պատկերասրահում>> մեթոդը <<Խճանկար>> մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

<<Երեք բանալի և մեկ կողպեք>> մեթոդի ժամանակ աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել ծավալուն դասերի դեպքում: Աշակերտներին առաջարկում ենք դասից դուրս գրել երեք տերմին (երեք բանալի), որը կարևոր է այդ նյութը յուրացնելու համար, բնագրից ընտրել մեկ նախադասություն (կողպեք), որը կամփոփի, կընդհանրացնի ասելիքը, միտքը,

գաղափարը: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

Այսօր հանրակրթական դպրոցների մեծ մասում դասարանների խտությունը անցնում է 20-25 (որոշ տեղերում՝ 30-34): Ոչ բոլոր դպրոցներն ունեն համապատասխան կահավորում և պայմաններ: Դասարաններում չկան շարժական սեղաններ, խմբային աշխատանքի համար նախատեսված պարագաներ, կապի առկայություն, տեսացրիչ, էլեկտրոնային գրատախտակ և այլն: 20 և ավելի աշակերտ ունեցող դասարաններում այս պարագայում նպատակահարմար է կիրառել <<Շրջվիր դեպի զույգդ>> մեթոդը:Այս մեթոդը հնարավորություն է տալիս խուսափել դասաժամին ավելորդ աղմուկից, տեղաշարժից և խառնաշփոթից:Աշխատանքային դիրքը լինում է դեմ առ դեմ:Հաղորդակցումը

կատարվում է խոսքով, աչքերով: Այստեղ կարևոր է աշակերտներին դիմել

պատահական ընտրությամբ՝ հնարավորություն տալով նրանց ներկայացնելու իրենց

պատասխաններն ամեն քննարկումից հետո: Նման անհատական պատասխանատվությունը ավելի զգոն է դարձնում զույգին:Այս մեթոդը ուսուցչին հնարավորություն է տալիս անարգել շրջել դասարանում, տալ անհատական հրահանգներ և առանձին մոտեցում ցուցաբերել խմբերին: Այս ժամանակ աշխատանքային աղմուկը կառավարելի է, իսկ աշխատանքային խմբերը չեն խանգարում իրար:

Բնականաբար, առաջին անգամ մեթոդը կիրառելիս չեն կարող թերություններ չլինել, ուստի որոշակի հաջողություն գրանցելուց հետո մեթոդի կիրառումը և արդյունավետությունը բարձրացնելու համար ցանկալի է և օգտակար դրա բազմակի կիրառությունը:

Յուրաքանչյուր մեթոդի կիրառման նպատակները խիստ բազմազան են, ինչը ենթադրում է նաև մեթոդի ձևափոխման հնարավորություն: Ցանկացած դաս և դասարան եզակի է, ուստի ուսուցչի վարպետության ցուցանիշներից մեկը

նպատակին համապատասխան մեթոդի ընտրությունն է։Աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու համար համագործակցային մեթոդները մեծ ներուժ ունեն, ինչը կրթական բարեփոխումների կարևոր պահանջներից է։

Համագործակցային մեթոդները թույլ են տալիս առավել արդյունավետ յուրացնել

նոր նյութը, զարգացնել ինքնուրույնության, համագործակցային, հետազոտական աշխատանք կատարելու բազում հմտություններ, օրինակ՝ տեղեկույթի որոնման, հավաքման, մշակման և այլն: Սակայն այդ հմտությունների ձեռքբերումը սովորողների կողմից երկարատև աշխատանքի արդյունք է, իսկ ուսուցչին հնարավորություն է տալիս կատարելագործել, հարստացնել իր մեթոդական մոտեցումները տարբեր խնդիրների լուծման ժամանակ:

Ուսուցչի աշխատանքի զարգացման ընթացքը պետք է արդյունավետ կարգավորել։Դրա համար կարելի է օգտագործել ինքնագնահատման աղյուսակ, որտեղ յուրաքանչյուր փորձից հետո ուսուցիչը գրանցում է տվյալ դասի հաջողություններն ու թերությունները: Դրանց վերլուծության արդյունքում ուսուցիչը հնարավորություն կունենա գտնելու թերությունները շտկելու, կատարելագործելու ուղիներ։Շարունակական աշխատանքի դեպքում ուսուցիչը կարող է հասնել մեթոդի կիրառման առավել արդյունավետության:

Այսպիսով,կարելի է եզրակացնել,որ ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է: Համագործակցային ուսուցումն ապահովում է մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում: Մանկավարժական նշանակությունից բացի, այն ունի նաև հասարակական գործառույթ: Համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար: Ուստի, այդ հմտությունների ձևավորումն ու զարգացումը պետք է իրականացնել ուսուցման և ուսումնառության գործընթացում՝ ապահովելով դրանց արդյունավետության գիտակցումն և ձեռքբերումները:

4.Եզրակացություն

Այսպիսով,վերը նշվածից ելնելով կարող ենք եզրակացնել,որ կրթության ոլորտի աշխատողները ամենուրեք գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացած ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն : Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է:Համագործակցային ուսուցում ասելով հասկանում ենք,որ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար:Համագործակցային ուսուցման ժամանակ ուսուցիչը պետք է հաշվի նստի աշակերտների ինքնուրույն կարծիքների, կայացրած որոշումների, միմյանց հետ ազատորեն հաղորդակցվելու իրավունքների հետ: Համագործակցային ուսուցումը ընձեռում է հնարավորություններ՝ բազմաբնույթ կրթական նպատակներին հասնելու համար:

Այս աշխատանքում անդրադարձ է կատարվել համագործակցային մեթոդների կիրառման արդյունավետության ուղիների մշակմանն ու մեթոդների ճիշտ ընտրությանը:Այս գործընթացի համար անհրաժեշտ նախադրյալ է ուսուցչի դասի պլանավորման նախապատրաստական աշխատանքների գրագետ կազմակերպումը, խմբերի աշխատանքների վերահսկումն ու ուղղորդումը:

Արագընթաց փոփոխությունները մարդուց պահանջում են նոր իրավիճակներին հարմարվելու, ճկուն գործելու հմտություններ:Ուստի պիտի կարողանալ համագործակցային մեթոդները, հնարները, փոքր աշխատանքային խմբերը արդյունավետ կիրառել:

Համագործակցային կարողություններ ձևավորելը նպաստում է երեխայի անկախ գործունեության ցանկությանը, խթանում փորձերի նկատմամբ հետաքրքրության զարգացումը, պայմաններ ստեղծում համագործակցության համար: Երեխան պետք է մոտիվացված լինի ոչ միայն ուսումնական գործունեության արդյունքով այլև հենց

նրա գործընթացով: Սա նաև սեփական անձնային աճի, ինքնակատարելագործման, ընդունակությունների զարգացման դրդապատճառն է:

Համագործակցային ուսուցման ժամանակ խմբերը ձևակերպում են առաջադրանքը, լուծում այն և պատրաստվում ներկայացնել,պատահականորեն ընտրված խմբի անդամը ներկայացնում է խմբի աշխատանքի արդյունքը: Բոլոր անդամները քննարկում են բոլոր լուծումները, տալիս հարցեր,յուրաքանչյուր խումբ պատրաստում և ներկայացնում է աշխատանքի հաշվետվություն:

Կարևոր հանգամանք է այն,որ համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար՝ խմբի անդամներին ուղղորդելու համար: Խմբերին անհրաժեշտ է բավական ժամանակ՝ միմյանց հետ ազատ և հարմարավետ զգալու համար:

Համագործակցային ուսուցումը, որպես այլընտրանք, փոխարինում է դաս-

դասարանային համակարգին։Ուսուցման երկու համակարգերի միջև բավականաչափ տարբերություններ կան։ Առաջին անգամ 17 –րդ դարում Կոմենսկին է ստեղծել դաս-դասարանային համակարգը: Նա տվել է դաս, դասամիջոց, արձակուրդ հասկացությունների սահմանումը: Սահմանել է դասի տիպերը,և Կոմենսկին առաջինն էր, որ կազմեց դասի պլան յուրաքանչյուր դասի համար: Նա գտնում էր, որ դասագիրքը պետք է երեխայի համար լինի մատչելի և համակարգված:Բայց ժամանակի ընթացքում պարզ դարձավ,որ դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ։Այլընտրանքային մոտեցումը համագործակցային ուսուցման համակարգին անցնելն էր։

Ուսուցումը սովորողի ներսում տեղի ունեցող բարդ գործընթաց է:Այն կարող է ուղղորդել ուսուցիչը, ստեղծել դրա համար նպաստավոր միջավայր, աջակցել և մտածելու հնարավորություն ընձեռել:Ամենակարևոր հանգամանքը համագործակցային ուսուցման ընթացքում ճիշտ մեթոդի ընտրությունն ու կիրառումն է:Ինչպես տեսանք, գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Մեթոդներից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները,կիրառելի է տարբեր տարիքային խմբերում և տարբեր թեմաներ ուսումնասիրելիս։Այստեղ արդեն կարևոր է ուսուցչի հմտությունն ու ճիշտ կողմնորոշվելը։Մի մեթոդը հնարավորություն է տալիս գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին:Մյուս մեթոդը զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ է ձևավորում։

Ի վերջո բոլոր մեթոդները փոխներգործուն գործընթաց են ուսուցչի և աշակերտի միջև, ինչի արդյունքում տեղի է ունենում գիտելիքի, հմտությունների և կարողությունների փոխանցում ու յուրացում՝ նախատեսված ուսումնառության բովանդակությամբ։

5.Օգտագործված գրականության ցանկ

1. Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա., Արնաուդյան Ա., Գրիգորյան Ք.,Դավթյան Մ., Օհանովա Ի., Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Երևան, 2004:

2.Մ. Աստվածատրյան և ուրիշներ,Մանկավարժական միտք,2012։

3. Обухова Л. Ф., Детская (возрастная) психология. Учебник. -- М., Российское педагогическое агентство. 1996:

4. . Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006։

5. Коменский Я.А., Великая дидактика. Всеобщего совета об исправлении дел человеческих. Пампедия//Педагогическое наследие/Сост. В. М. Кларин, А.Н. Джуринский.-М.,-1989.

6. Վ. Դյաչենկո, Ժամանակակից դիդակտիկայի հիմնահարցերը։